Զանազան նյութեր • Разное • Miscellaneous

Ռուսական Բուսաբանական Ընկերության Պատվիրակների II (X) Համագումարը

1998թ. մայիսի 26-31-ը Սանկտ-Պետերբուրգում կայացավ Ռուսական Բուսաբանական ընկերության պատվիրակների II(X) համագումարը: Համագումարի շրջանակներում անցկացվեց միջազգային կոնֆերանս «Բուսաբանության խնդիրները XX - XXI դարերի սահմանագլխին» թեմայով, որի պլենար և սեկցիոն նիստերում լսվեցին 250 գիտական ելույթներ:

Համագումարին մասնակցում էին 429 մասնագետներ Ռուսաստանի տարբեր տարածքներից և ԱՊՀ երկրներից, ինչպես նաև արտասահմանից: Համագումարի և համաժողովի կազմակերպիչներն էին Ռուսաստանի Բուսաբանական Ընկերությունը և Վ.Լ. Կոմարովի անվան Բուսաբանության ինստիտուտը՝ հիմնարար հետազոտությունների Ռուսաստանյան ֆոնդի ֆինանսական օժանդակությամբ:

Ռուսաստանի, Հայաստանի, Բելոռուսի, Ուկրաինայի, Մոլդովայի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Էստոնիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Դանիայի, Ֆինլանդիայի բուսաբանները ներկայացրին 1000-ից ավելի զեկուցումների թեզիսներ, որոնք ամփոփվեցին կոնֆերանսի աշխատանքների երկհատորյակում:

Ներածական խոսքով համագումարը բացեց ՌԲԸ պրեզիդենտ, ՌԳԱ թղթ. անդամ Ռ.Վ. Կամելինը: Ողջունելով պատվիրակներին և հյուրերին, նա նշեց, որ այսպիսի ներկայացուցչական հավաքի կազմակերպումը նշանավոր երևույթ է բուսաբանության պատմության մեջ: Ընթերցվեց ՌԲԸ պատվավոր պրեզիդենտ Ա.Լ. Թախտաջյանի ուղերձը: Ողջույնի խոսքերով հանդես եկան Սանկտ-Պետերբուրգի կառավարության ներկայացուցիչը, ՌԳԱ Սանկտ-Պետերբուրգի գիտական կենտրոնի նախագահի տեղակալ, ՌԳԱ թղթ. անդամ Ս.Գ. Ինգե-Վեչտոմովը և ՌԳԱ ընդհանուր կենսաբանության բաժանմունքի ներկայացուցիչը: Կատարվեց նախագահության, քարտուղարության, մանդատային, հաշվիչ և խմբագրական հանձնաժողովների ընտրություն: Համագումարի նախագահությունում ԱՊՀ երկրներից որպես ներկայացուցիչ ընտրվեց Հայաստանի պատվիրակ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանը:

Համագումարի հետագա աշխատանքը ընթացավ պլենար նիստերում, որտեղ լսվեցին և քննարկվեցին ընդհանրացնող զեկուցումներ, որոնք վերաբերվում էին XX - XXI դարերի սահմանագլխին բուսաբանական գիտության արդիական հարցերին:

Համագումարի գիտական ծրագիրը ընդգրկված էր 12 սեկցիաներում՝ Անատոմիայի և մորֆոլոգիայի, Անոթավոր բույսերի, Բուսաբանական ռեսուրսավորման, Բույսերի ինտրոդուկցիայի, Երկրաբուսաբանության, Սշակաբույսերի, Մամռաբանության, Քարաքոսաբանության, Սնկաբանության, էկոլոգիական ֆիզիոլոգիայի, Սաղմնաբանության և Ռեպրոդուկտիվ կենսաբանության:

Սնկաբանության սեկցիայի շրջանակներում, որի կազմակերպիչներն էին Ի.Վ. Կարատիգինը և Ա.Ե. Կովալենկոն, առաջին օրը երեկոյան կայացավ ՌԲԸ մակրոմիցետներն ուսումնասիրող հանձնաժողովի 7-րդ աշխատանքային խորհրդակցությունը բացումը (կազմակերպիչներ՝ Ա.Ե. Կովալենկո, Ն.Վ. Պուրցևա):

Սեկցիաների նիստերին բացի Ռուսաստանի ներկայացուցիչներից մասնակցեցին Հայաստանի, Ուկրաինայի, Էստոնիայի, Բելոռուսի և Ղազախստանի սնկաբանները, կարդացվեցին 27 զեկուցումներ՝ սնկերի կենսաբազմազանության, կարգաբանության, էկոլոգիայի, կուլտուրալ-մորֆոլոգիական առանձնահատկությունների սկզբունքային հարցերի, ինչպես նաև կենսատեխնոլոգիական և կիրառական ասպեկտների վերաբերյալ:

Հայաստանի ներկայացուցիչները ելույթ ունեցան 3 զեկուցումներով, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրին և արժանացան բարձր գնահատականի:

Լ.Լ. Օսիպյանի զեկուցումը սննդամթերքների սնկային կոնտամինացիայի մասին էր, որը շուկայական տնտեսությանը անցման ժամանակաշրջանում խիստ արդիական է: Մ.Գ. Թասլախչյանը լուսաբանեց Հայաստանի մակրոսկոպիկ սնկերի կարգաբանական կազմը: Ս.Գ. Նանագուլյանը ներկայացրեց Հայաստանի սիմբիոտրոֆ մակրոմիցետների տեսակային կազմը

և նրանց համակեցությունները հանրապետության հիմնական անտառաստեղծ ծառատեսակների հետ:

Համագումարի և պատվիրակների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրին թվով 30 պոստերային զեկուցումները, որոնց նշանակալի մասը վերաբերվում էր ԱՊՀ-ի տարբեր տարածքների սնկերի բիոտայի ուսումնասիրությանը: Մասնակիցները նորագույն տեղեկություններ ստացան մակրոմիցետների հազվագյուտ տեսակների, քիչ ուսումնասիրված սնկերի էկոլոգիական խմբերի և տեսակների մասին, որոնք ենթակա են ընդգրկվելու սնկերի տարածաշրջանային Կարմիր գրքերում և Կարմիր ցուցակներում:

Կազմակերպված «Կլոր սեղանների» ժամանակ քննարկվեցին սնկերի միկոցենոլոգիական և միկրոէկոլոգիական մեթոդների մշակման և սնկերի Կարմիր գրքերի ձևակերպման և հրատարակման արդիական խնդիրները:

Աշխատանքի ընթացքում ներկայացված նյութերի ակտիվ քննարկումների ժամանակ մշակվեցին հետագա անելիքները, կարևորվեցին տեղեկատվության փոխանակման և տարբեր շրջանների սնկաբանների համագործակցության անհրաժեշտությունը:

Համագումարի ընթացքում կազմակերպվեցին բուսաբանական էքսկուրսիաներ, որոնց ժամանակ հավաքվեցին բուսաբանական, մասնավորապես սնկաբանական հարուստ նյութեր: Դրանք հաջորդ օրն իսկ մշակվեցին Բուսաբանության ինստիտուտի սնկերի կարգաբանության և սաղմնաբանության լաբորատորիայում՝ մակրոմիցետների ցուցադրական որոշմամբ (կազմակերպիչներ Մ.Ա. Բոնդարցևա, Է.Լ. Նեզդոյմինոգո, Կ. Ա. Կալամեես): Բացի այդ համագումարի մասնակիցները և հյուրերը ծանոթացան Վ.Լ. Կոմարովի անվան Բուսաբանության ինստիտուտի գիտական լաբորատորիաներին, ջերմատներին, հավաքածուներին և «Ռուսաստանի Բուսաբանական Ընկերությունը 80 տարեկան է» ցուցահանդեսին:

Համագումարի հագեցած ծրագիրը, զեկուցումների արդիական թեմաները, նիստերի ընթացքում նյութերի շուրջ ակտիվ քննարկումները, բուսաբանների և սնկաբանների անձնական շփումները բավական օգտակար էին բոլոր մասնակիցների համար:

Հայաստանի սնկաբանները համագումարի աշխատանքներին հնարավորություն ստացան մասնակցելու Ջ. Սորոսի ֆոնդի աջակցության շնորհիվ:

Լ.Լ. Օսիպյան, Մ.Գ. Թասլախչյան, Մ.Գ. Նանագուլյան

Երևանի պետական համալսարան,
բուսաբանության ամբիոն